

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (1990-2001թթ)\*

ՈՒՃԱ ԽԱԼԱՐԺԱՆ

Բանակի բառեր՝ Լեռնային Դարաբաղի հակամարտություն, Ադրբեյջան, Ռուսաստան, ԵՄ, Կասպյան նավթ, տնտեսական համա գործակցություն, Բաքու-Թբիլիսի-Զեյ-հան նավթանուղ, հայ-թուրքական հարաբերություններ, ԱՄՆ:

Լեռնային Դարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի որևէ ժամանակահատվածի ուսումնասիրությունը չի կարող կորցնել իր արդիականությունը, քանի դեռ շարունակվում է բանակցային գործընթացը և ստատուս քվոն չի ստացել իր հրավաքաղաքական ամրագրումը։ Լեռնային Դարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի դերակատարները տարածաշրջանում շահեր ունեցող «հսկաներն» են Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Իրան, ԵՄ։ Նրանցից յուրաքանչյուրը յուրօրինակ, հաճախ հակասական, երբեմն փոփոխական, սակայն միշտ և ամենուրեք սեփական կենսական շահերին խարսխված դերակատարում է ունեցել և ունի ազգամիջյան հակամարտությունների կար գավորման գործընթացում։ Սույն աշխատանքի նպատակն է բացահայտել էն երգակիրների գործոնի դերը Հարավային Կովկասում և բացահայտել էն երգետիկ շահերի ազդեցությունը Լեռնային Դարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի վրա 1990-2001թթ ընթացքում։ Աշխատանքի նպատակին հասնելու համար առաջ են քաշվել և քննարկվել հետևյալ խնդիրները։

1. Վերլուծել Հարավային Կովկասի արտատարածաշրջանային դերակատարների էներգետիկ շահերը։
2. Բացահայտել այդ շահերի ազդեցությունը ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի վրա։

Զնակերպված խնդիրների լուծման նպատակով ուսումնասիրության համար օգտագործել են քաղաքափության պատմահամեմատական և համակարգակառուցվածքային մեթոդները, որոնց կիրառումը թույլ է տվել ուսումնասիրել տվյալ պատմական ժամանակահատվածում շահերի փոփոխությունները և գործողությունների զարգացումները։ Կախված էներգետիկ անվտանգության գործոնից, և համարել ԼՂ հակամարտության կարգավորման կոնկրետ զար գացումները շահերի փոփոխության հետ։

ԽՍՀՀ փոլոզումից և հայոց անկախ պետականության վերականգնումից հետո ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային հիմնախնդիրների կարևորագույն բաղադրիչ են եղել հայ-թուրքական հարաբերությունները, որոնք իրենց ակնառու ազդեցությունն են թողել Լեռնային Դարաբաղի հակամարտության ինչպես պատերազմական տարիների հրադարձությունների, այնպես էլ կարգավորման գործընթացի վրա։

ԽՍՀՀ փոլոզման շեմին թուրքիան բավականին լուրջ մտավախություն ուներ կապված Հայաստանի անկախության ձեռքբերման հնարավոր հետևանքների հետ։ Հայաստանի պահանջատիրական հավակնություններին դեմ առ դեմ Հայաստանի անկախացման պարագայում թուրքիան վախենում էր անխուսակելիորեն հայտնվելուց։ [1] Սակայն ՀՀ Գև նախագահ Ալեք Տեր-Պետրոսյանը հաճախ հանդես էր գալիս հայտարարությամբ, որը փարաւոց թուրքիայի մտավախությունը։ Անկարան Հայա-

\* Հոդվածն ընդունվել է 18.01.2016։

Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Գարիկ Քեոյանը։

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

տանի նկատմամբ իր դիրքորոշումը որոշակիորեն հստակեցրեց, երբ 1991թ. ապրիլին Մոսկվայում թուրքիայի ղետազան Վոլգան Վոլուալը երօրյա այցով ժամանեց Երևան: <<Գև նախազահ լևոն Տեր-Պետրոսյանը Վոլուալի հետ հանդիպման ժամանակ նշեց. «Ուզում ենք բարեկամանալ: Պատրաստ ենք ամեն տեսակ փոխչափավետ համագործակցության: Հայաստանը որևէ տարածքային պահանջներ չունի թուրքիայից:»[2]

1991թ. դեկտեմբերի 16-ին թուրքիան հայտարարեց համաշխարհային հանրությանը, որ, առանց բացառության, ճամաչում է բոլոր հետխորհրդային երկրների անկախությունը:[3] Նման իրավիճակում ստեղծվել էին բարենպաստ պայմաններ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման համար: 1992թ. օգոստոսի 23-25-ին թուրքիայի փոխարտգործնախարարի տեղակալ Բիլ գին Ունանը, Բալկանների և Կովկասի վարչության տնօրենի տեղակալ Զանդան Ազերը և ԱԳ գլխավոր քարտուղար Ալթայն այցելեցին Երևան:[4] Դիվանագիտական առաքելության անդամները նշում են բոլոր այն առավելությունները, որոնք կունենա Հայաստանը թուրքիայի հետ մշտական քաղաքական և տնտեսական հարաբերություններ ունենալու շնորհիվ: Միևնույն ժամանակ առաքելության անդամներն առաջին անգամ խոսեցին ԼՂ հակամարտության կարգավորման կարևորության, ինչպես նաև <<կողմից թուրքիայի և Ադրբեյջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու մասին՝ հայ-թուրքական հարաբերությունների հաստատման համար:»[5] Այս հարցի կապակցությամբ հայկական կողմն ընդգծեց, որ <<-ն, անդամակցելով ՄԱԿ-ին, արդեն իսկ պարտավորվել է հարգել տարածքային ամբողջականության սկզբունքը:»[6] Սակայն Լեռնային Դարաբաղում հայկական ուժերի շարունակական հաղթանակների ֆոնի վրա ամբողջ պատերազմական գործողությունների ընթացքում Ադրբեյջանը եղբայրական թուրքիայից ստանում է ռազմական և դիվանագիտական հսկայական աջակցություն: Սակայն այս աջակցությունը վերագրել միայն ադրբեյջանական պրոպագանդայի կողմից կիրառվող «մեկազգ, երկու պետություն»[7] կոչերին, այնքան էլ իհմնավոր չէ:

1994թ. սեպտեմբերին Բաքվում կնքեց մի պայմանագիր, որը ստացավ «Դարի պայմանագիր» անվանումը: Այս պայմանագիրը բեկումնային դարձավ Ադրբեյջան-Արևմուտք հարաբերություններում, որն իր ազդեցությունը թողեց Արցախյան հիմնախնդրի լուծման և, ինչու չէ, նաև Բաքվի նկատմամբ Արևմուտքի Վարած մեղմ քաղաքականության վրա: Պայմանագիրը ստորագրեցին աշխարհի 8 երկրներ ներկայացնող 13 նավթային կազմակերպություններ, այդ թվում ադրբեյջանական SOCAR-ը (20% մասնաբաժին), բրիտանական BP-ը (17.127%), ամերիկյան Amoco-ն (17.01%, ամերիկյան ընկերությունների թիվը 4-ն էր, որոնց ընդհանուր մասնաբաժնը գերազանցում էր 40%-ը), ռուսական Lukoil-ը (10%) և մի շարք այլ ընկերություններ՝ Նորվեգիայից, Շոտլանդիայից, Թուրքիայից և Սաուտյան Արաբիայից:[8]

Ղեռւս 1992թ. Ադրբեյջան էր այցելել Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Սարգարես Տերչերը, ով ադրբեյջանական կառավարությամբ համանձնել էր 2 անդրդրագիր՝ 30 մին ԱՄՄ դոլար ընդհանուր արժողությամբ: Գումարը կանխավճար էր արդեն սուու զված «Չիրագ» և դեռ ոչ ամբողջությամբ ստուգված «Ճահ Ղենիզ» հանքերի համար:[9] Սակայն «Դարի պայմանագիրը» այդ ընթացքում չէր կարող ստորագրվել, քանի որ այդ ժամանակահատվածում ոչ մի միջազգային նավթային ընկերություն չէր նա նման ռիսկի և խոշոր ներդրումներ կատարի պատերազմի մեջ գտնվող Ադրբեյջանում:

Ի տարբերություն բրիտանացիների՝ ադրբեյջացիները չ գիտեին ինչպես վարվել ամերիկացիների հետ: 1992թ., շնորհիվ հայկական լոբբիի, ԱՄՆ Կոնգրեսն ընդունում է Ազատության պաշտպանության օրենքի 907-րդ հոդվածը, որն արգելում էր օգնություն ցուցաբերել Ադրբեյջանին, քանի դեռ նա չի վերացրել «Հայաստանի և Լեռնային

## ՄԵՐՈՂ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Դարաբաղի նկատմամբ իրագործվող շրջափակումներն ու ճնշման այլ ձևերը:»[10] Միաժամանակ Հայաստանը զոնվում էր այն երկրների ցանկում, որոնք ահօնի ֆինանսավորում էին ստանում ԱՄՆ-ից, մինչեւ Աղրբեջանը դուրս մնաց ԱՄՆ օգնության տրամադրումից:

ԱՄՆ արտաքին քաղաքականությունը հակամարտության կարգավորման գործմռացում մնում էր հակասարբեջանական մինչև Հեյրար Ային և Կասպյան «սուսուր» ի հայտ գալը: 1997թ. օգոստոսին ԱՄՆ նախա գահ Բիլ Քինթոնը հայտարարեց, որ Կովկասը և Կասպից ծովը մտնում են ԱՄՆ ազգային հետաքրքրությունների գոտի:[11] Որպես արդյունք փոխվեց Կաշխան գոտինի վերաբերմունքը Հարավային Կովկասի հանրապետությունների հանդեպ: Այնուհետև սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո Զբիգնև Բժեզինսկին, Բրենթ Սքոութով և Էնթոնի Լեյքը՝ անվտանգության երեք նախական խորհրդատունները, դիմեցին Սենատի դեկանարությանը՝ պահանջելով «Աղրբեջանի նկատմամբ հնացած պատժամիջոցի» վերացում: Գործարարները և նավթային ընկերությունները, ինչպես նաև իրեական առաջատար կազմակերպությունները նույնպես պահանջեցին պատժամիջոցը չեղալ հայտարարել: Այդ պայքարը զիսավորող Սենատոր Սեմ Բրաունըքը (սենատոր Կանզաս նահան գից) ի վերջո հասավ Կոնգրեսի թույլտվությամբ՝ ազգային անվտանգության հարցերում նախագահի կողմից բացառություն կատարելու գործում:[12]

Պարսից ծոցի պատերազմի հետևանքով 1990թ. օգոստոսին ՄԱԿ-ի ԱԽ 661 բանաձևով փակվում է Քիրովը-Ցումուրալը նավթամուղը, որն իրավան նավթը հասցնում էր թուրքական Միջերկրական ծովի Ձեյհան նավահան գիստը: Անվտան գության խորհրդի 661 բանաձևը մեծ հարված էր հասցեի թուրքիայի տնտեսությանը և վերջինս փնտում էր հնարավոր ուղիներ իրավիճակի շտկման և տարածաշրջանում իր ազդեցության վերական գման համար:

Թուրքիայի համար խնդրի լուծման լավագույն տարբերակը էներգետիկ ռեսուրսների ոլորտում համագործակցությունն էր Աղրբեջանի հետ: Մասնավորապես, Թուրքիայի համար մեծ կարևորություն է ներկայացնում աղրբեջանական նավթը և զազն արևմտյան շուկա հասցնելու գործընթացը, որի գիսավոր նպատակը, դատելով Թուրքիայի տարածաշրջանային և միջտարածաշրջանային քաղաքականությունից, ոչ թե գուտ միջնորդ դաշնայն էր (թեև դա էլ խիստ կարևոր և շահավետ էր Թուրքիայի համար), այլ այն, որ Արևմուտքի համար պարզ դաշնա թուրքիայի որոշիչ դերն աղրբեջանական վառելիքի վերահսկողության կամ տեղակիցման ուղղությունը ձշտելու հարցում: Թուրքիան սկսեց մեծ ուշադրություն դարձնել իր կողմից երթևից իրականացված ամենակարևոր նախագծերից մեկի՝ Բարու-Ձեյհան նավթամուղի կառուցմանը: 1993թ. մարտին Անկարայում ստորագրվեց Բարու-Ձեյհան նավթամուղի կառուցման վերաբերյալ թուրք-աղրբեջանական համաձայնագիրը: Բարու-Ձեյհան նավթամուղը թուրքիայի արտաքին քաղաքականության մեծ հաղթանակն էր, որն այդպիսով վերածվեց ոչ միայն վառելիքի վերահսկողի, այլև դրա տեղակիցման հարցում Արևելքի և Արևմուտքի (նաև Սերծավոր Արևելքի ու Աղրբեջանի) միջև միջնորդի:[13]

Նոր նավթամուղի կառուցման վերաբերյալ քննարկումները սկսվեցին 1990-ական թթ. սկզբին: Քննարկվում էին մի քանի տարբերակներ: Ուստանանը ցանկանում էր, որ Աղրբեջանական նավթի տեղակիցությունը կատարվի իր տարածքով[14]: Բարու-Նովոռոսիյսկ երթուղով, որը հասում է Ձեչնիայի տարածքը, իսկ Նովոռոսիյսկից համաշխարհային շուկաներ նավթը տանկերմերով փոխադրվում էր միջերկրականի մեջուցմերով:[15]

## ՄԵՍՐՈԴ ՄԱՆԵՐ ՀԱՍԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Հատկանշական է, որ Խորհրդային Միության փլուզումից հետո և ԱՄՆ-ը, և ԵՄ-ը միշտ էլ վարել են հետխորհրդային տարածությունում ռուսական ազդեցության գոտին հնարավորինս սահմանափակելու և կրծատելու քաղաքականություն:[16] Իսկ Արդրեցանի իշխանությունները տվյալ ժամանակաշրջանում ջանում էին հավասարակշռված քաղաքականություն վարել Արևմտատիքի և Ուստաստանի հետ: 1995թ. հոկտեմբերի 9-ին Արդրեցանի միջազգային նավթային կոմսուրայիլ (AIOC) որոշեց արդրեցանական նավքն արտահանել արդեն իսկ գործող ինչպես հյուսիսային՝ Բաքու-Նովոռոսիյսկ նավքամուղով, այնպես էլ արևմտյան՝ Վրաստանի տարածքով անցնող Բաքու-Սուվեսա նավքամուղով: Սակայն, Բաքու-Նովոռոսիյսկ նավքամուղը, որպես ոչ միայն ադրեցանական, այլ նաև կասպիական նավքի արտահանման հիմնական տարրերակ, չի դագործվեց, քանի որ նավքամուղի մի հատվածն անցնում էր Չենիայով, որտեղ ռազմական հակամարտություն էր ընթանում ինչը անհնարին էր դարձնում նավքամուղի լիարժեք գործարկումը: Բացի այդ, Թուրքիան և ԱՄՆ-ն մեծապես շահագրգռված էին Ուստաստանը շրջանցող նավքամուղի կառուցմամբ:

Ուստական կողմը, լավ հասկանալով արևմտյան ստրատեգիա գների հեռահար նպատակները, ձգուում էր Արդրեցանին և արևմտյան վեկտորն ընտրողներին պահելու նոր ինսե գրացիոն նախաձեռություններով: 1996թ. հունիսին կովկասյան երեք հանրապետությունների դեկավարները հանդիպեցին Կիլովոլուսկում, որտեղ Մոսկվան առաջարկեց ծրագիր Կովկասի համար՝ հիմնված կովկասյան պետությունների տարածքային ամբողջականության և ինքնիշխանության հար գնան սկզբունքների, խաղաղության և կայունության պահպանման վրա: Առաջարկվում էր նաև ստեղծել միջնորդական կառուցներ հակամարտությունների կարգավորման նպատակով, ամրապնդել համագործակցությունը Թուրքիայի և Իրանի հետ, միևնույն ժամանակ կամնել ոչ տարածաշրջանային պետությունների ներքայանցումը Կովկաս: Սակայն ժամանակաշրջանում ամառը Արևմտյան կողմն էր:[17]

Հաշվի առնելով այս բոլոր հանգամանքները՝ արևմտյան ներդրողներն սկսեցին ավելի լուրջ ուշադրություն դարձնել և, ի վերջո, ընտրություն կատարեցին հօգուտ Ուստաստանը շրջանցող նախագծի: Նախատեսվում էր, որ նավքամուղը պետք է անցներ անդրկովկասյան երեք հանրապետություններից երկուսի տարածքով: Այն սկիզբ պետք է առներ Արդրեցանից, այնուհետև պետք է անցներ կամ Վրաստանի, կամ Հայաստանի տարածքով: Միջազգային շրջանակները շահագրգռվածություն էին ցուցաբերում նավքամուղի՝ Հայաստանով անցնելու տարրերակով՝ այն դիտելով որպես լուրջ գրավական դարաբաղյան հակամարտությունում խաղաղության հաստատման գործընթացում: Սակայն Հայաստանի տարրերակն Արդրեցանի և Թուրքիայի համար անընդունելի էր՝ Ղ հակամարտության կար գավորված չլինելու և հայ-թուրքական հարաբերություններում առկա հիմնախնդիրների պատճառով: Այսպիսով՝ 1999թ. նոյեմբերի 18-ին Թուրքիայի, Արդրեցանի և Վրաստանի նախագահների կողմից ԵԱՀԿ Ստամբուլյան գագաթաժողովում նախագծի առնչությամբ ստորագրվեց Միջկառավարական համաձայնագիրը:[18] ԱՄՆ նախագահ Բիլ Քիննթոնը նույնպես ստորագրեց այդ համաձայնագիրը՝ որպես դիտողը: ԱՄՆ ներգետնիկայի նախարար Բիլ Ռիչտոնը, համաձայնագիրը որակելով որպես ԱՄՆ արտաքին քաղաքականության լրջագույն հաղթանակ, նշեց, որ դա ռազմավարական համաձայնագիր է, որը նպաստում է ԱՄՆ ազգային շահերին:[19] Այս փաստը մեկ անգամ ևս ապացուցում է, որ ԱՄՆ դեկավարությունն էապես շահագրգռված էր Բաքու-Թրիլիսի-Ձեյիհան նավքամուղի կառուցմամբ՝ որպես այլնոտրանք արդեն գոյություն ունեցող Բաքու-Նովոռոսիյսկ նավքամուղի: ԱՄՆ կառավարությունը ձգուում էր հնարավորինս թուացնելու Ուստաստանի և Ի-

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

րանի ազդեցությունը տարածաշրջանում, ուստի աջակցում էր թուրքական նախագծին: Ժամանական անխափան աշխատում էր ԱՄՆ այս մոտեցման օգտին, հատկապես որ Ուսասատան իր ներքին հիմնախնդիրների համար էր լուծումներ որոնում: Մի կողմից՝ ԱՄՆ դերակատարության բարձրացման և ՆԱՏՕ շրջանակներում թուրքիայի հետ ունեցած ջերմ հարաբերությունները, իսկ մյուս կողմից՝ Եվրոպայի էներգետիկ անվտան գործադրությունը ռուսական էներգակիրներից թուլացնելու համաեվրոպական խնդիրը հիմք դարձան, որ Արևմուտքը, ի դեմ ԱՄՆ-ի, փոխի իր բացահայտ հայանապատ ուղղվածությունը ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք եղակացնել.

1. Հակամարտությունը Զեմիայում, ինչպես նաև Եվրոպայի էներգետիկ անվտանգության կախվածությունը ռուսական էներգակիրներից և ռուսական ազդեցությունից ազատելու գերինադիրը ստիպեցին Արևմուտքին ընտրություն կատարելու հօգուտ Ուսասատանը շրջանցող Բաքու-Թրիխի-Ջեյիան նախագծի:

2. Զնայած Արևմուտքի ջանքերին, որ նավթամուղն անցնի ԼՂ և ՀՀ տարածքներով, որը մեծապես կնպաստեր հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ այս մոտեցումը թուրքիայի և Աղրեջանի համար անընդունելի եղավ:

3. Բաքու-Թրիխի-Ջեյիան նավթամուղի կառուցմամբ թուրքիան և Աղրեջանը արեցին ամեն ինչ, որպեսզի Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը մեկուսացնեն տարածաշրջանային տնտեսական և արդյունաբերական ծրագրերից՝ նման կերպ փորձելով ԼՂ-ն և ՀՀ-ն դարձնել տնտեսապես անկայուն և թույլ:

4. ԼՂ-ն և ՀՀ-ն շրջանցող նավթամուղի կառուցումը Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին բողեք ռուսական և իրանական մեծ աջակցությունից կախված:

5. Բաքու-Թրիխի-Ջեյիան նավթամուղի կառուցումը ուժեղացրեց ՌԴ-Արևմուտք մրցավագը տարածաշրջանային էներգետիկ ռեսուրսների վերահսկողության համար, որտեղ ԼՂ հակամարտությունը, որպես անվտանգության գործոն, ունի իր ուրույն տեղը: Զնայած աղրեջանցի հրապարակախոսները սպառնում են տարածքը ուժով հետ վերցնել, Ղարաբաղի հայերը ռազմական մեծ գերազանցություն ունեն: Պատերազմի վերսկումը կարող է մեծ վնասներ հասցնել, ընդհուած մինչև Աղրեջանի էներգետիկ արդյունաբերության ոչնչացում, ինչը կարող է զգալի հետևանքներ ունենալ Արևմուտքի համար: Սա նշանակում է, որ Արևմուտք այն ուժեղը, որոնք հետաքրքրված են նավթամուղի անվտանգությամբ, պետք է անեն ամեն բան, որ ԼՂ հակամարտությունը խաղաղ լուծում ստունա, կամ, գոնե, պետք է պահպանն տարածաշրջանում ստատուս քին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հակոբ Չաքրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Եր., 1998, էջ 11:
2. Հեզանական Գազետա, 14.05.1991թ.
3. Գրիգոր Արշակյան, Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում, 1991-2001թթ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009, էջ 53:
4. Գրիգոր Արշակյան, նշված աշխատությունը, էջ 63:
5. Այբարս Գօրգուլյան, Արման-Թուրքական հարաբերությունները և անձնագործությունը, Երևան: Հայաստանի պատմության պատմություն, 2008, էջ 143-144

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱԼԱՄԱՆԻ ԻՌԱԾՈՒ 2016**

6. Киреев И., Турция между Европой и Азией. Итоги европезации на исходе 21 века, М., Клафт+ ИВ РАН, 2001, стр.366
7. President of the Republic of Azerbaijan Heydar Aliyev's speech during the official visit to the Republic of Turkey (May 5-8, 1997), <http://lib.aliyev-heritage.org/en/96196110.html>
8. Nasser Sagheb and Masoud Javadi, Azerbaijan's "Contract of the Century", [http://www.azer.com/aiweb/categories/magazine/24\\_folder/24\\_articles/24\\_aioc.html](http://www.azer.com/aiweb/categories/magazine/24_folder/24_articles/24_aioc.html)
9. Dan Morgan and David B. Ottaway, Washington Post Staff Writers, October 4, 1998; Page A3, <http://www.washingtonpost.com/wp-srv/inatl/europe/caspian100498.htm>
10. Martha Brill Olcott, U.S. Policy in the South Caucasus, Partnership for Peace Consortium of Defense Academies and Security Studies Institutes, 2002, p. 59
11. Sabina Garashova, U.S. Geopolitical Trends in the Caspian Region, [http://www.ca-c.org/c-g/2014/journal\\_eng/c-g-3-4/03.shtml](http://www.ca-c.org/c-g/2014/journal_eng/c-g-3-4/03.shtml)
12. Դեյվիդ Լ. Ֆիլիպս,  
Բարձրագույնելով անցյալը, ժողովրդական դիվանագիտությունը և հայ-թուրքական հաշտեցումը, Եր., 2010, էջ 118:
13. Գրիգոր Արշակյան, Արման Եղիազարյան, Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008թ. , «21-րդ ԴԱՐ» N 6, 2012, էջ 44:
14. Vitaly V. Naumkin, Russian Policy in the South Caucasus, Partnership for Peace Consortium of Defense Academies and Security Studies Institutes, 2002, p. 32
15. Lester W. Grau, Hydrocarbons and a New Strategic Region: The Caspian Sea and Central Asia, Foreign Military Studies Office, Fort Leavenworth, KS.  
<http://www.globalsecurity.org/military/library/report/2001/hydrocarbons.htm>
16. Գարիկ Քերյան, ՎՈՒՈՒՀ-ի կազմավորումն ու տարածաշրջանային գործընթացների զարգացման միտուները /1990-ական թթ. Վերջ-2004թ./, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու, Եր., 2015, էջ 226:
17. Նոյն տեղում:
18. Zeyno Baran, "The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Implications for Turkey", The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Oil Window to the West, The Central Asia-Caucasus Institute, Silk Road Studies Program, p. 107,  
[http://www.silkroadstudies.org/resources/pdf/Monographs/2005\\_01\\_MONO\\_Starr-Cornell\\_BTC-Pipeline.pdf](http://www.silkroadstudies.org/resources/pdf/Monographs/2005_01_MONO_Starr-Cornell_BTC-Pipeline.pdf)
19. Press briefing by Energy Secretary Bill Richardson and Special Advisor to the President and to the Secretary of the State for Caspian Basin Energy Diplomacy John Wolf, The Conrad Hotel, Istanbul, Turkey, November 18, 1999,  
<http://clinton4.nara.gov/textonly/WH/New/Europe-9911/briefings/1999-11-18a.html>

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Էներգետիկ անվտանգության դերը ԼՂ հակամարտության  
կարգավորման գործընթացում (1990-2001թթ)  
Ոինա Խալաթյան**

Էներգետիկ անվտանգության խնդիրները մեծ ազդեցություն ունեն ժամանակակից համաշխարհային քաղաքականության վրա և լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը 20-րդ դարի վերջում տեղի էր ունենում այս նոյն համատեքստում: Գերտերությունների դերակատարությունը Հարավային Կովկասում չէր սահմանափակվում միայն լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմամբ, այս

## **ՄԵՐՐՈԴ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍԱՏԱՄԱՆԻ ԽՈՏՏՈՒ 2016**

տարածաշրջանում նրանք լուծում էին իրենց էներգետիկ անվտանգության խնդիրները, որոնք իրենց ազդեցությունը թողեցին հակամարտության կարգավորման գործընթացի վրա: Հետազոտության նպատակն է իրականացնել պատմահամեմատական և կառուցվածքահամակարգային ուսումնասիրություն՝ էներգետիկ անվտանգության դերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում պարզելու համար:

### **РЕЗЮМЕ**

#### **Роль энергетической безопасности в процессе урегулирования Карабахского конфликта Рима Халатян**

**Ключевые слова:** Нагорно-Карабахский конфликт, Азербайджан, Россия, ЕС, Каспийская нефть, экономическое сотрудничество, Баку-Тбилиси-Джейхан нефтепровод, армяно-турецкие отношения, США.

Обеспечение энергетической безопасности имеет огромное влияние на современную мировую политику, и проблема урегулирования Нагорно-Карабахского конфликта в конце XX в. не выделялась из этого контекста. Роль мировых акторов в процессе урегулирования конфликта не ограничивается только стремлением установить мир в регионе, а затрагивает проблему обеспечения их энергетической безопасности. Целью нашего исследования является проведение историко-сравнительного и структурно-системного анализа роли энергетической безопасности в рамках урегулирования Нагорно-Карабахского конфликта в 1990–2001 гг.

### **SUMMARY**

#### **The Role of Energy Security in the Framework of Nagorno-Karabakh Conflict Settlement (1990-2001) Rima Khalatyan**

**Keywords:** Nagorno-Karabakh conflict, Azerbaijan, Russia, EU, Caspian Oil, economic cooperation, energy security, Baku-Tbilisi-Ceyhan oil pipeline, Armenian-Turkish relations, USA.

Energy security has a strong influence on modern world politics and the resolution of the Nagorno-Karabakh conflict, at the end of 20th century, did not stand out of it. The role of the world players is not limited only to the resolution of Nagorno-Karabakh conflict, but also tries to ensure energy security. The aim of our research was to conduct historical and structural-systemic analysis of the energetic security role in the framework of the Nagorno-Karabakh conflict settlement in 1990-2001.